**Պ-675[1]-09.10.2023-ՊԱ-011**

**Երկրորդ ընթերցում**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ**
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ազգային անվտանգության մարմինների մասին» 2001 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-294 օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասում «մարտական զենք, ինչպես նաև ծառայողական» բառերը հանել:
**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Պ-675[1]-09.10.2023-ՊԱ-011/0**

**Երկրորդ ընթերցում**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ**
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ազգային անվտանգության մարմինների մասին» 2001 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-294 օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասում «մարտական զենք, ինչպես նաև ծառայողական» բառերը հանել:
**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

**«ՁԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» (Պ-675-09.10.2023-ՊԱ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| | **Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը** | **Առաջարկ (փոփոխություն, լրացում)** | **Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը** | **Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը** |
|---|---|---|---|---|
| ***1.*** | **Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)** | «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» Պ-675-09.10.2023-ՊԱ-011/0 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| ***2.*** | **Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)** | Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «թմբուկը:» բառից հետո լրացնել «հարվածային մեխանիզմը» բառերը: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| ***3.*** | **Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)** | Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «կամ 140 մմ-ից ոչ ավելի երկարություն ունեցող ակոսավոր փող» բառերը փոխարինել «այդ թվում՝ 140 մմ-ից ոչ ավելի երկարության ակոսավոր մասով» բառերով: | | |
| ***4.*** | **Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)** | Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «և» շաղկապն առաջրկվում է փոխարինել «, որոնք» բառով: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *5.* | **Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)** | Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետում «մասեր» բառից առաջ լրացնել «հիմնական բաղկացուցիչ» բառերը: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| *6.* | **Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)** | Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետում «կամ այլ նշանակետ» բառերը փոխարինել «նշանակետը» բառով44-րդ կետում «գնահատման մարմնի տված փաստաթուղթ» բառերը փոխարինել «գնահատման մարմնի կողմից տրված համապատասխանության գնահատման փաստաթուղթ (համապատասխանության սերտիֆիկատ)» բառերով: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| *7.* | **Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)** | 8-րդ կետում «նետողական զենք» բառերից հետո առաջարկվում է լրացնել «(աղեղներ՝ 27 կգ/ուժ-ից բարձր ձգողության ուժ ունեցող և արբալետներ՝ 43 կգ/ուժ-ից բարձր ձգողության ուժ ունեցող)» բառերը: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| *8.* | **Կառավարություն** | «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին **Պ-675[6]-09.10.2023-ՊԱ-011/0** Նախագիծն առաջարկվում է հանել փաթեթից՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2023 թվականի նոյեմբերի 22-ին «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքի ընդունման կապակցությամբ ընդունվել է նաև «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-370-Ն օրենքը (ուժի մեջ է մտնելու 2024 թվականի հունվարի 1-ից), ինչի շրջանակներում «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետն ուժը կորցրած է ճանաչվել, իսկ 23-րդ հոդվածն ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ***9.*** | **Կառավարություն** | Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվում է «ռազմական նշանակության արտադրանքի» հասկացությունը, ինչպես նաև նախագծով նախատեսվում են ռազմական նշանակության արտադրանքին վերաբերող մի շարք կարգավորումներ: Հարկ է նշել, որ ռազմական նշանակության արտադրանքին վերաբերող կարգավորումները դուրս են Օրենքի կարգավորման շրջանակներից: Ուստի առաջարկվում է դրանք հանել նախագծից | **Չի ընդունվել** | **Չի ընդունվել** |
| ***10.*** | **Կառավարություն** | Նախագծի շրջանակներում առաջարկվում է քննարկել Օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասում զենքով պարգևատրված անձանց մոտ զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների առկայության դեպքում որպես պարգև տրված զենքը մալելու և նշված անձանց վերադարձնելու մասին կարգավորումներ նախատեսելու հնարավորությունը՝ նշված կարգավորումներն ուժը կորցրած ճանաչելու փոխարեն: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |
| ***11.*** | **Կառավարություն** | նախագծերի փաթեթից հանել ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում նախատեսող **Պ-675[17]-09.10.2023,04.12.2023-ՊԱ-011/1** նախագիծը: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |